

5.2. Իրավախախտումներ

5.2.1. Հանցագործություններ: Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության ինֆորմացիոն կենտրոնի ներկայացրած տվյալների, հանրապետությունում 2001թ. հունվար-մայիսին, ըստ առանձին հանցատեսակների խմբերի, գրանցված հանցագործությունների դեպքերի մասին տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Հանցագործություններ	2001Ա. ՌձԾԿՅՐ 3 ձ- ՍՅՈՇԵ, ընդամենը	2001թ. հունվար-մայիսի աճը կամ նվազումը տոկոսով 2000թ. հունվար-մայիսի համեմատ (նվազումը «-» նշանով)
Բոլոր ծառայությունների գծով, ընդամենը	4487	- 6.2
այդ թվում՝		
քրեական հետախուզության գծով, ընդամենը	2711	- 4.4
որից՝ ծանր	431	- 16.0
այդ թվում՝		
դիտավորյալ սպանություն	34	- 5.6
սպանության փորձ	11	- 15.4
բռնաբարություն և բռնաբարության փորձ	10	0
մարմնական վնասվածք, ընդամենը	190	8.0
որից՝ ծանր մարմնական վնասվածք	77	14.9
պետական կամ հանրային գույքի հափշտակում, ընդամենը	341	29.7
այդ թվում՝ գողության միջոցով	332	30.7
կողոպուտի միջոցով	2	-
ավազակության միջոցով	1	-
խարդախության միջոցով	6	- 33.3
անձնական ունեցվածքի հափշտակում, ընդամենը	1370	- 11.7
այդ թվում՝		
գողության միջոցով, ընդամենը	1108	- 6.3
որից՝ բնակարային	287	- 3.7
ավտոտրանսպորտի	18	28.6
կողոպուտի միջոցով	27	- 50.9
ավազակության միջոցով	44	33.3
խարդախության միջոցով	191	- 32.0
ճանապարհատրանսպորտային պատահար մահացու ելքով /որի նկատմամբ հարուցված է քրեական գործ/ տրանսպորտային միջոցների փախցնել	46	17.9
խուլիզանություն	40	- 13.0
խուլիզանություն	171	8.9
ապօրինաբար թմրամիջոցներ պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, գործածելը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը	133	- 22.2
ապօրինի կերպով զենք, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, պատրաստելը, ձեռք բերելը կամ վաճառելը	125	8.7
այլ հանցագործություններ քրեական հետախուզության գծով	240	- 7.0
տնտեսական հանցագործությունների գծով, ընդամենը	244	- 6.9
որից՝ ծանր	90	- 25.0
այդ թվում՝		
յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքի չարաշահ- ման միջոցով՝ պետական գույքի հափշտակում, ընդամենը	89	3.5
որից՝ խոշոր չափերի	30	- 23.1
կաշառակերություն	23	27.8

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հանցագործություններ	2001 Ն. Նոյեմբերի 3-ին, ընդամենը	2001 թ. հունվար-մայիսի աճը կամ նվազումը տոկոսով 2000 թ. հունվար-մայիսի համեմատ (նվազումը «-» նշանով)
իշխանությունը կամ պաշտոնական դիրքն ի չարը գործադրելը	11	- 47.6
կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելը կամ իրացնելը	25	- 51.0
այլ տնտեսական հանցագործություններ	96	11.6
այլ ծառայությունների գծով	1532	- 9.2
այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահար առանց մահի /որի նկատմամբ հարուցված է քրեական գործ/	146	7.4

Բոլոր ծառայությունների գծով հանցագործությունների քանակական բաշխվածությունը ըստ մարզերի և տրանսպորտային ՆԳ հանրապետական վարչության

	2001 թ. հունվար-մայիս, ընդամենը	2001 թ. հունվար- մայիսի աճը կամ նվազումը %-ով 2000 թ. հունվար-մայիսի համեմատ (նվազումը «-» նշանով)
Երևան	1967	3.0
Արագածոտն	113	- 14.4
Արարատ	159	- 37.6
Արմավիր	287	- 44.5
Գեղարքունիք	237	8.7
Լոռի	448	4.2
Կոտայք	241	- 21.2
Շիրակ	521	3.6
Սյունիք	213	4.4
Վայոց Ձոր	44	- 32.3
Տավուշ	191	3.2
«Զվարթնոց» օդանավակայանի ՆԳ բաժին	17	-
Տրանսպորտային ՆԳ վարչություն	49	- 18.3
Ընդամենը	4487	- 6.2

5.2.2. Վարչական իրավախախտումներ: Ըստ ՀՀ ԱԿԾ ամփոփ տվյալների, 2000 թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել են 152.2 հազ. վարչական իրավախախտումներ՝ իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չառաջացնող հակաիրավական գործողություններ: 1999 թ. համեմատ վարչական իրավախախտումների քանակը նվազել է 14.5%-ով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ցուցանիշներն ըստ գերատեսչական կազմակերպությունների ներկայացված է ստորև.

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը, միավոր	2000թ. աճը կամ նվազումը %-ով 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով)	Անձանց թվաքանակը, որոնց վերաբերյալ կայացվել են որոշումներ (վճիռներ), մարդ	2000թ. աճը կամ նվազումը %-ով 1999թ. համեմատ (նվազումը «-» նշանով)	Տուգանքի գումարը, մլն. դրամ	
					նշանակվել է	զանձվել է
ՀՀ պետական եկամուտների նախարարության հարկային համակարգ	12715	- 24.3	12606	- 21.1	362.4	229.7
ՀՀ պետական եկամուտների նախարարության մաքսային համակարգ	650	- 52.2	662	- 51.5	325.9	70.5
«Էներգապետհսկողություն» զվ	1803	- 32.4	1191	- 41.2	7.5	4.4
ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման վարչություն	286	51.3	288	52.4	12.5	10.5
ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն	358	- 6.3	352	- 7.9	4.7	2.9

Ընդհանուր իրավախախտումների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ճանապարհատրանսպորտային տնտեսության և կապի բնագավառներում արձանագրված վարչական իրավախախտումները՝ 65.2%, որոնք 1999թ. համեմատ նվազել են 11.6%–ով և կազմել 99.3 հազ. դեպք:

Տրանսպորտում, ճանապարհատրանսպորտային տնտեսության և կապի բնագավառում հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ ցուցանիշները ըստ մարզերի բերված են ստորև.

	Հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը, միավոր	Անձանց թվաքանակը, որոնց վերաբերյալ կայացվել են որոշումներ (վճիռներ), մարդ	Տուգանքի գումարը, հազ. դրամ	
			նշանակվել է	զանձվել է
ք.երևան	75815	58121	224663.5	200163.0
Արագածոտն	1033	1139	3780.4	3780.4
Արարատ	2541	2541	6576.0	6171.8
Գեղարքունիք	3158	3158	11822.2	11691.2
Լոռի	2465	2465	7906.1	7224.1
Կոտայք	2227	2227	12572.5	7569.5
Շիրակ	9523	8405	586479.0	586101
Սյունիք	2343	2572	7836.2	7436.2
Վայոց Ձոր	68	68	424.0	424.0
Տավուշ	108	108	365.0	365.0
Ընդամենը ՀՀ	99281	80804	862424.9	830926.2

Իրավախախտումների բավականին մեծ քանակ՝ 12.0 հազ. դեպք կամ 7.9%, արձանագրվել է կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգություն անելու բնագավառում, որը 1999թ. համեմատ ավելացել է 35.2%–ով: Դրանց 52.3%–ը հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու դեպքերն են:

Առևտրի, ֆինանսների և տնայնագործական արհեստներով զբաղվելու բնագավառներում արձանագրվել է վարչական իրավախախտումների 12.7 հազ. դեպք: Դրանց 25.3%–ը վերաբերվում է հաշվապահական հաշվառում չվարելուն կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելուն կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելուն,

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

որոնք կարող են առաջացնել հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում: 28.9%-ը հայտագիրը կամ հաշվարկը հաշվետվական հաշվետվությունը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ հարկային տեսչության կամ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի մարմիններին սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերն են: 21.0%-ն արձանագրվել է առանց պետական գրանցման կամ առանց արտոնագրի, արտոնագրման ենթակա կամ հատկապես արգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բնագավառում, 6.9%-ը հարկերը և պետական սոցիալական ապահովագրության մուծումները ժամանակին չվճարելու, 4.5%-ը հարկային կամ կենսաթոշակային ու զբաղվածության ֆոնդի, կամ սոցիալական ապահովության ֆոնդի մարմիններում հաշվառման կանգնելուց խուսափելու դեպքերն են, 13.4%-ը՝ այդ բնագավառում արձանագրված այլ վարչական իրավախախտումներ են: Մնացած բնագավառներում վարչական իրավախախտումների տեսակարար կշիռները տատանվում են 0.1 – 2.0%-ի սահմաններում:

Վարչական իրավախախտումներին վերաբերող գործերը քննելու լիազորություններ ունեցող մարմինների կողմից բացահայտված իրավախախտողների 97.9%-ը կամ 130.1 հազ. մարդ նշված մարմինների կողմից ենթարկվել են տարբեր կարգի վարչական տույժերի, այդ թվում՝ 1.6% կամ 2.1 հազ. մարդ զրկվել են հատուկ իրավունքից, 1.0% կամ 1.3 հազ. մարդ ստացել են վարչական կալանք: Մնացածը ստացել են վարչական այլ տիպի պատիժներ:

Վարչական պատասխանատվության ենթարկված անձանց բաշխվածությունն ըստ կիրառված տույժերի ձևերի

	Վարչական տույժերի ենթարկված անձանց թվաքանակը	%-ով վարչական տույժերի ենթարկվածների ընդհանուր թվաքանակից
Տուգանք	122336	94.4
Նախազգուշացում	3893	3.0
Հատուկ իրավունքից զրկում	2065	1.6
Վարչական կալանք	1311	1.0
Ընդամենը	129605	100

2000թ. հանրապետությունում վճռված վարչական տույժերի տարեկան ընդհանուր գումարը կազմել է 2.8 մլրդ. դրամ, որից գանձվել 2.2 մլրդ. դրամ (79.4%): Մեկ տուգանվածի հաշվով տուգանքի տարեկան միջին չափը կազմել է 22.6 հազ դրամ:

Հանրապետությունում վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ վարչական պատասխանատվության ենթարկման չկատարված որոշումների քանակը կազմել է 690: